



# Ս.ՍԱՀԱԿ ԵՒ Ս.ՄԵՍՐՈՊ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻ

the VERY REV. ZAVEN ARZOUMANIAN, PASTOR

Փետրուար 25, 1981

Գերաշնորհ

Տ. Թորգոմ Արքեպս. Մանուկեան,  
Առաջնորդ Հայց. Եկեղեցւոյ Հիւս. Ամերիկայի

Նիւ Եորք

Գերաշնորհ Սրբազան Հայր,

Համայնքիս տարեկան Ծխական Ժողովը գումարուեցաւ մեր նախագահութեանը ներքեւ փետրուար 15ին, 1981, ատենապետութեամբ Պրն. Ռուբէն Պէրպէրեանի եւ ատենադպրութեամբ Պրն. Յակոբ Բիթալեանի: 1980 տարուոյ 366 տրատու արդամներէն 126ի ներկայութեան ժողովը օրինաւորապէս բացուած յայտարարուեցաւ յ. մ. ժամը 2ին:

Օրակարգի մաս կը կազմէր Ծխական Խորհուրդի դադարեալ վեց անդամոց տեղ նորերու ընտրութիւնը, համաձայն նախապէս պատրաստուած ցանկին: Ընտրութիւնը տուաւ հետեւեալ արդիւնքը.

- |                     |          |
|---------------------|----------|
| 1. Սթիվըն Պարսամեան | 110 քուէ |
| 2. Տորն Տէվլէթեան   | 95       |
| 3. Փոլ Մուրատ       | 82       |
| 4. Րիչըրտ Շաքարեան  | 81       |
| 5. Բարլ Պոյաճեան    | 70       |
| 6. Տորն Եագուպեան   | 60       |

Ա. անձնափոխանորդ Դաւիթ Ահագինեան 55

Կը ներփակեմ նախապէս մեր պատրաստած տեղեկագիր-գրքոյկէն օրինակ մը: Յատենի ժողովոյ կարգացուեցան Հովիւին ու Ծխական Խորհուրդին տեղեկագիրները: Ներփակ կը գտնէք նաեւ օրինակ մը ժողովի ատենագրութենէն, ինչպէս նաեւ Առաջնորդարանիդ հարցարանն ու յարակից թուղթերը, յուսալով որ գոհացուցիչ կը գտնէք զանոնք:

Խնդրելով վերոյիշեալ ընտրութեանց վաւերացումը, կը մաղթենք Ձերը Սրբազնութեան ուժ եւ կարողութիւն եւ կը մնամ

սիրոյ ողջունիւ աղօթակից,  
*Zaven Arzoumanian*  
Զաւէն Մ.Վ. Արզումանեան  
Հովիւ եւ նախագահ  
Ծխական Ժողովի